ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

EU4Culture

Իրականացման ժամանակահատված: 01.01.2021 - 31.12.2024

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 7 850 000

Ընդհանուր բյուջե: € 7 850 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Goethe-Institut

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ:

https://linktr.ee/EU4Culture

Նախագծի կայքէջ: goethe.de/ins/ge/de/kul/sup/e4c.html

Նախագծի նկարագրություն:

EU4Culture-ը Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող նախագիծ է, որը տևելու է 2021 թվականի հունվարից մինչև 2024 թվականի դեկտեմբեր: Այն աջակցում է մշակութային և ստեղծարար հատվածին՝ հատուկ ուշադրություն դարձնելով մայրաքաղաք չհանդիսացող քաղաքներին Արևելյան գործընկերության երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայի Հանրապետությունում և Ուկրաինայում:

Ակնկալվող արդյունքներ:

Նախագիծը.
- Կաջակցի մշակույթի զարգացման տեղական ռազմավարության մշակմանը և իրականացմանը: Յուրաքանչյուր գործընկեր երկրից մինչև երեք մայրաքաղաք չհանդիսացող քաղաքներ կստանան 30,000 եվրո՝ մշակութային զարգացման ռազմավարություն մշակելու համար: Այնուհետև այդ երեքից մեկը կստանա մինչև 300,000 եվրո՝ իր ռազմավարությունն իրականացնելու համար.
- Կգործարկի դրամաշնորհային սխեմա՝ տեղական և տարածաշրջանային փառատոների, մշակութային նախագծերի և նորարարական նախագծերի համար:
- Կկազմակերպի շարժունության սխեմա՝ արվեստագետների և մշակույթի մասնագետների համար:
- Կաջակցի կարողությունների զարգացմանը ընտրված քաղաքներում՝ միջազգայնացման, մշակութային ձեռնարկությունների և կառավարման, մշակութային ցուցանիշների և վիճակագրության ոլորտներում: